

Տարոսիկ - Նոյեմբեր

Ծիւ ծիւ մատնոցիկ,
սեւ ագռաւը բռնեցինք...
Ծիւ ծիւ մատնոցիկ,
սեւ ագռաւը փետեցինք...

Իւղով միւղով տապկեցինք...
Իւղով մեղրով տապկեցինք...
Իւղով մուկով տապկեցինք,
վայ...

Ծակ տապակով տապկեցինք...
Սանամարին կերցուցինք...
Սանամարը կերամ,
չկերաւ,
կերամ, չկերաւ...
Ագռաւը ծակ տապակէն,
թըն, թոմ... կոմ... կոմ...
Տապակէն...
տանիքէն...

Ծիւ, ծիւ,
սեւ ագռաւ ու ծիւ...
Սեւ ագռաւ գնաց Երուսաղէմ...
Բուրդ բերաւ,
բամպակ բերաւ...

Բուրդը, բամպակը
մամիկին տուաւ...

Չախ չախ,
ճախարակ...

Մանէ մանէ ճախարակ,
մանէ բուրդ ու բամպակ...

Տարոսիկ - Նոյեմբեր

Հոյ նարէ, Հոյ նարէ,
ճախրակի ոտ փշատ է...
փշատը ինչ է...
Հոյ նարէ, Հոյ նարէ,
ճախրակ մանող շիմշատ է...
ինչը շատ է...

Հոյ նարէ, Հոյ նարէ,
ճախրակի ոտ սալոր է...
Հոյ նարէ, Հոյ նարէ,
ճախրակ մանող կլոր է...

Մանէ՛ մանէ՛ ճախարակ,
մանէ թելը երկմի բարակ...